ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 26. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ

1 Լեգեոնը այսուհետև կազմված էր 6000 մարդուց: Այն բաժանվում էր 10 կոհորտի՝ գումարտակի, որոնք կազմված էին 5 ցենտուրիայից՝ վաշտից, յուրաքանչյուրում 100 մարդ: I կոհորտը բաղկացած էր 800 ամենափորձառու զինվորներից: Ամեն լեգեոն ուներ նաև հեծելազորի վաշտ, ինժեներական վաշտ և օժանդակ այլ ծառայողներ:



Զինվորի զենքը, հագուստը, հանդերձանքը և սնունդը ապահովում էր պետությունը: Ծառայության դիմաց զինվորը ստանում էր ռոճիկ, նաև բաժին ռազմավարից: Ծառայությունը պետք է տևեր 20 տարի, զորացրվելիս վետերանները պետությունից հողաբաժին էին ստանալու:

«Կրիա» մարտաշարք

2

Այդ նույն ժամանակ Միհրդատի փեսան՝ հայոց Տիգրան Մեծ արքան, պարթևներին հաղթելով, նվաճեց Հյուսիսային Միջագետքը և Ատրպատականը: Թուլացած Սելևկյան պետությանը հաղթելով՝ նա Հայաստանին միացրեց Սիրիան և Լեռնային Կիլիկիան: Կրկնակի չափով ընդարձակված Հայաստանը կառավարելու համար Տիգրան Մեծը հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Տիգրանակերտը:

3

Իր թշնամիների անուններից Սուլլան ***«Սև ցուցակ»*** կազմեց, որում նշված մարդկանց ով ասես կարող էր մատնել կամ սպանել և պարգև ստանալ: Նրանց ունեցվածքը անցնում էր Սուլլային: Դրանից նա պարգևներ բաժանեց իր կողմնակիցներին, նրա բանակի 120000 վետերանները հողաբաժիններ ստացան Իտալիայում:

Սպարտակից անջատված ստրուկների ջոկատների ջախջախումը հռոմեացիների կողմից

Սպարտակի գլխավորած ապստամբ ստրուկների ուղին Իտալիայում

Հռոմեական զորքերի հետ Սպարտակի ապստամբ ստրուկների ճակատամարտերը

Սուլլան փոփոխեց Հռոմեական հանրապետության կառավարման կարգը: Պետությունը այսուհետև կառավարում էր անսահմանափակ իշխանությամբ օժտված դիկտատորը՝ Սենատի և պաշտոնյաների օգնությամբ: Սենատորների թիվը 300-ից հասցվեց 600-ի՝ ի հաշիվ Սուլլայի կողմնակիցների: Պետական պաշտոնյաների թիվն ավելացվեց, իրավունքները կրճատվեցին: Ժողովրդական ժողովը և ժողովրդական տրիբունի պաշտոնը դարձան ձևական: Հացի ձրի բաշխումը վերացվեց:

4

Ք.ծ.ա. II դարում ստրուկների հզոր ապստամբություններ եղան Սիցիլիա կղզում, որոնք Հռոմը դժվարությամբ ճնշեց: Սպարտակը 70 այլ գլադիատորների հետ փախավ դպրոցից և ամրացավ Վեզուվ լեռան վրա: Նրանց միացան այլ փախստական ստրուկներ ևս: Ապստամբները ջախջախեցին իրենց դեմ ուղարկված հռոմեական զորքերը: Սպարտակը ուզում էր ստրուկներին դուրս բերել Իտալիայից: Նրա բանակը նախ շարժվեց Հյուսիսային Իտալիա, ապա շրջվեց դեպի հարավ՝ Սիցիլիա կղզին անցնելու համար, սակայն չկարողացավ՝ նավեր չունենալու պատճառով: